Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի վերջնական արտաքին բովանդակային (ծրագրային) գնահատման տեխնիկական առաջադրանքը

I. ՆԿԱՐԱԳԻՐ

Եվրոպական Միության ֆինանսավորմամբ գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի (ղեկավար կազմակերպություն), Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Հայաստանի համայնքների միության, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի, ինչպես նաև «Ագորա Սենթրալ Յուրըփ» չեխական ՀԿ-ի համատեղ կոնսորցիումով:
Ծրագիրը համաֆինանսավորվում է Միջազգային մասնավոր ձեռնարկությունների կենտրոնի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի խթանում և բարեփոխումներ. Հայաստան» ծրագրի կողմից:

Ծրագրի տևողությունը՝ **34 ամիս է**: Ծրագիրը սկսվել է **2016թ.-ի դեկտեմբերի 15-ին** և ավարտվելու է **2019թ.-ի հոկտեմբերի 15-ին**: Ծրագրի բյուջեն կազմում է **2.222.256 եվրո:**

Ծրագրի **հիմնական նպատակն է՝** ՔՀԿ-ների ազդեցության ուժեղացումը հանրային քաղաքականությունների գործընթացի վրա, իսկ **առանձին նպատակներն են՝** ՔՀԿ-ների կարողությունների ուժեղացումը կոալիցիաների կառուցման գործում և քաղաքականությունների շուրջ կառուցողական ու ռազմավարական փոխգործակցությունը կենտրոնական իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների գործընկերների հետ:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ <u>հիմնական գործողությունները</u>.

1. ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների կարողությունների զարգացում

ա. Հավաստագրային դասընթացների անցկացում Հայաստանում ամերիկյան համալսարանում ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների կոալիցիաների համար: Դասընթացները անցկացվել են երկու փուլով. հիմնական և խորացված:

բ Երևանում և ՀՀ մարզերում ՔՀԿ-ների ինկուբատորների ստեղծում, որոնց նպատակն է՝ ցուցաբերել մասնագիտական և տեխնիկական աջակցություն Հայաստանի ՔՀԿ-ներին՝ ծրագրի թիրախ 9 և այլ ոլորտների և 4 թեմատիկ կարողությունների զարգացման նպատակով:

գ Ստեղծվել և/կամ ուժեղացվել են ՔՀԿ-ների կոալիցիաների ներքին թեմատիկ ոլորտների և ներքին կարողությունները:

դ Ստեղծվել են ՔՀԿ-ների առցանց ուսուցման մոդուլներ:

Ծրագրի թիրախ 9 ոլորտներն են.

1. Հանրային ֆինանսների կառավարում
2. Մարդու իրավունքներ
3. Արդարադատություն
4. Բիզնես
5. Կրթություն
6. Գյուղատնտեսություն
7. Տնտեսություն
8. Էներգետիկա
9. Սոցիալական ոլորտ. հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառում:

Այլ ոլորտների ներքո դիտարկվում են՝ մշակույթը, ՏԻՄ և բնապահպանությունը:

Թեմատիկ ոլորտներն են

1. Հանրային բյուջեների և քաղաքականությունների մոնիթորինգ,
2. Փաստարկված քաղաքականությունների մշակում,
3. Կոալիցիաների ստեղծում և/կամ զարգացում,
4. Հանրային քաղաքականությունների մշակման գործընթացում կառուցողական մասնակցություն/ երկխոսություն Կառավարության և ՏԻՄ-երի հետ:

2. Ենթադրամաշնորհների տրամադրում ՔՀԿ-ներին և ՔՀԿ-ների կոալիցիաներին

ա. ՔՀԿ-ների 9 կոալիցիաների ղեկավար ՀԿ-ներին տրամադրվել է դրամաշնորհ, որի նպատակն էր՝ ստեղծել և մեծացնել Կոալիցիաների ազդեցությունը թիրախ ոլորտների հանրային քաղաքականությունների մշակման, ջատագովման և այդ գործընթացներում հանրային մասնակցության ապահովման վրա:

բ ՔՀԿ-ների 9 կոալիցիաներին տրամադրվել է ենթադրամաշնորհ, որի նպատակն էր՝ զարգացնել ՔՀԿ-ների կարողությունները:

գ. ՔՀԿ-ների ինկուբատորների 31 անդամ ՔՀԿ-ների տրամադրվել է 29 ենթադրամաշնորհ, որի նպատակն էր՝ ստեղծել/զարգացնել Կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ կայուն երկխոսությունը, մշակել/բարելավել փաստարկված հանրային քաղաքականություններ, ապահովել դրանց ջատագովությունը, ինչպեսև՝ մշտադիտարկել հանրային քաղաքականությունների կիրառումը:

3. Ծրագրային այլ գործողություններ

ա. Աջակցություն ՔՀԿ-ներին, որի շրջանակներում ՀԿ-ների և հիմնադրամների դաշտը կարգավորող և փոփոխված ու լրացված օրենսդրության վերաբերյալ ՔՀԿ-ներին տրամադրվել է անվճար իրավաբանական խորհրդատվություն: Ծրագրի օգնությամբ մի շարքը ՔՀԿ-ների գրանցվել և վերագրանցվել են՝ համապատասխանեցնելով իրենց կանոնադրությունը օրենսդրության պահանջներին:

բ. Միջոցառումների կազմակերպում, այդ թվում՝ Կառավարություն/ՏԻՄ-ՔՀԿ համաժողովներ, սեմինար-քննարկումներ, ֆոկուս-խմբային քննարկումներ, Թաուն-հոլ ձևաչափով հանդիպումներ, Կառավարություն/ՏԻԿ-ՔՀԿ աշխատանքային խմբերի ձևավորում և աշխատանքների կատարում: Միջոցառումները կազմակերպվել են ինչպես ՔՀԿ-ների և պետական մարմինների հետ համագործակցությամբ, այնպես էլ՝ միջազգային գործընկերների մասնակցությամբ:

գ. Ծրագրի և դրա շրջանակներում իրականացված միջոցառումների, արդյունքների և այլ կարևոր ձեռքբերումների տեսանելիության և թափանցիկության ապահովում, համագործակցություն ԶԼՄ-ների հետ, տեսանյութերի, ֆիլմերի և այլ թվային նյութերի պատրաստում և հրապարակում:

դ. Ծրագրի արդյունավետ իրականացման ուղղված այլ գործողություններ:

II. ԱՐՏԱՔԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Գնահատման նպատակն է ուսումնասիրել ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող Ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունները, դրանց համապատասխանությունը Ծրագրի ուղղություններին և նպատակներին, հավաքագրել ծրագրի շրջանակներում հանդիպած մարտահրավերները, ինչպես նաև ծրագրի ավարտից հետո տրամադրել հետագա քայլերի վերաբերյալ գործնական առաջարկություններ: Արտաքին գնահատման արդյունքները հիմնականում նախատեսված են Հայաստանում ԵՄ պատվիրակության և ծրագրի իրականացնողների համար:

III. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Գնահատումը պետք է ներառի հետևյալ հարցերը.

- Ծրագրային գործունեությունը որքանո՞վ է համապատասխանում ծրագրի նպատակներին և ուղղություններին:
- Ինչքանո՞վ է ապահովվել ծրագրի գործունակությունը:
- Ինչպիսի՞ արդյունավետություն է ունեցել ծրագրի գործունեությունը.
- Ինչպիսի՞ ազդեցություն է ունեցել Ծրագիրը իր ուղղակի և անուղղակի շահառուների, գործընկերներ շրջանում.

- ապահովվե՞լ է ծրագրի շարունակականության կայունությունը:

Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծրագիրը ավարտման փուլում է, առավել ուշադրություն պետք է դարձվի վերջին երկու հարցերին. ազդեցությունը և կայունությունը:

Գնահատման վերլուծությունը պետք է ներառի.

Համապատասխանություն

- Գնահատել ծրագրի համապատասխանությունը՝ կառավարության և դոնոր կազմակերպության ռազմավարությունների և քաղաքականությունների հետ:
- Գնահատել, թե արդյո՞ք ծրագիրը հստակ հատկորոշել է առկա խնդիրները, վերլուծել նախկին փորձից քաղված դասերը, ապահովել դրանց կապակցվածությունը ընթացիկ նախաձեռնությունների հետ:
- Գնահատել, թե արդյո՞ք ծրագիրը ապահովել է ծրագրի նպատակների սահմանում, այդ թվում՝ խնդիրներ, արդյունքներ, դրանք իրականացնելու համար միջոցառումների/գործողությունների ծրագիր:
- Գնահատել, թե արդյո՞ք ծրագիրը մշակել է հստակ և արդյունավետ տրամաբանական կառուցվածք՝ անհրաժեշտ գործողությունների ծրագրով և ռեսուրսների ժամանակացույցով:

Գործունակություն

Գործունակության գնահատումը պետք է կենտրոնանա հետևյալի շուրջ.

- Բյուջեի ամենօրյա կառավարման որակ, այդ թվում՝ արդյո՞ք անբավարար բյուջեն գործոն հանդիսացել է, թե՞ ոչ.
- Արդյո՞ք հանգամանքների փոփոխությունների դեպքում ծրագրի իրականացնողների կողմից ցուցաբերվել է ճկունություն, թե՞ ոչ.
- Ինչպե՞ս են կարգավորվել ծրագրի հարաբերությունները կոնսորցիումի բոլոր անդամների, շահառուների և դոնորների հետ:

Արդյունավետություն.

Արդյունավետության գնահատումը պետք է կենտրոնանա հետևյալի շուրջ.

- Արդյո՞ք հնարավոր է եղել հասնել նախատեսված ցանկալի արդյունքներին և ի՞նչ արդյունավետություն է ունեցել ծրագիրը ուղղակի և անուղղակի շահառուների, հիմնական շահագրգիռ կողմերի վրա:
- Արդյո՞ք արդյունքների մակարդակում ենթադրություններն ու ռիսկերի գնահատումը եղել են անհամապատասխան կամ ոչ լիարժեք, կամ միջամտել են չնախատեսված արտաքին գործոններ: Որքա՞ն ճկուն է եղել ծրագրի կառավարումը՝ արդյունքների նվաճման ուղղությամբ, որոնք նպաստել են Ծրագրի նպատակների իրականացմանը.

ի՞նչ մակարդակի և ի՞նչ ձևաչափի հաջողված աջակցություն է ստացել հիմնական շահագրգիռ կողմերից, այդ թվում Կառավարությունից, ԵՄ-ից (Գլխավոր գրասենյակից և տեղական գրասենյակից) և այլն:

Ազդեցություն

Ազդեցության գնահատումը պետք է ուսումնասիրի.

- Որքանո՞վ են իրականացվել նախատեսված նպատակները և որքանո՞վ են դրանք պայմանավորված ծրագրի իրականացման համար ձեռնարկված գործողություններով:
- Եթե եղել են չնախատեսված ազդեցություններ, ապա որքանո՞վ են դրանք ազդել ընդհանուր ազդեցության վրա:

Կայունություն

Կայունության վերլուծությունը պետք է կենտրոնացած լինի.

- Ծրագրի արդյունքների և նվաճումների նկատմամբ սեփականության իրավունք: Այսպես օրինակ՝ ի սկզբանե ծրագրով նախատեսված նպատակների իրականացման ուղղությամբ ի՞նչ մակարդակի խորհրդատվություն են ստացել բոլոր շահագրգիռ կողմերը, և արդյո՞ք համաձայնվել են դրանց հետ, ինչպես նաև ծրագրի իրականացման ընթացքում պահպանե՞լ են այդ համաձայնությունը:
- Քաղաքականության աջակցություն և շահառու հաստատությունների պատասխանատվություն. որքանո՞վ են համապատասխանում դոնորի և ներպետական մարմինների քաղաքականությունները միմյանց: Եթե եղել են քաղաքականության փոփոխություններ, ապա ի՞նչ հետևանքներ են դրանց ունեցել: Որքանո՞վ են ներպետական, սեկտորային և բյուջետային քաղաքականություններն ու առաջնահերթությունները ազդել ծրագրի վրա, ընդ որում՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական առումներով:
- Պետական, հասարակական, բիզնես և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից աջակցության մակարդակը. որքանո՞վ է ծրագիրը ազդել օրենսդրական նախաձեռնությունների վրա:
- Սոցիալ-տնտեսական գործոններ, արդյո՞ք ծրագիրը համագործակցել է իշխանությունների ֆորմալ և ոչ ֆորմալ կառույցների, հասարակական համակարգերի հետ: Արդյո՞ք այն նպատակ ունի դրանցից որևէ մեկը փոխելու, և ինչպե՞ս են այդ փոփոխությունները ընդունվում թիրախ խմբերի և այլ շահագրգիռ կողմերի կողմից: Որքանո՞վ է այն հիմնված այսպիսի գործոնների վերլուծության վրա, ինչպիսիք են՝ ուղղակի և անուղղակի շահառուների ներգրավումը և մասնակցությունը նախագծման և իրականացման գործում: Ինչպիսի՞ հարաբերություններ են առկա ծրագրի անձնակազմի և շահառուների միջև:
- Արդյո՞ք այնպիսի խաչաձևվող խնդիրները, ինչպիսիք են՝ գենդերային հավասարությունը, շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և լավ կառավարումը հաշվի առնվել ծրագրի իրականացման ողջ ընթացքում:

IV. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գնահատումը պետք է ներառի հետևյալ բոլոր փուլերը.
Փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելությունների և հանդիպումների կազմակերպում ուղղակի և անուղղակի շահառուների, գործընկերների, այլ շահագրգիռ կառույցների հետ, հարցազրույցների անցկացում, վերլուծությունների, հաշվետվության նախագծում, հետադարձ կապի ապահովում, նախագծված բոլոր փաստաթղթերի խմբագրում, հաշվետվության վերջնական տարբերակի պատրաստում՝ հայերեն և անգլերեն լեզուներով:
Փաստաթղթերի ուսումնասիրությունը պետք է ներառի ծրագրի նյութերի հետազոտում, որը ներառում է, սակայն սահմանափակված չէ հետևյալ փաստաթղթերով. ծրագրի առաջարկ, տրամաբանական կառուցվածք, հաշվետվություններ, հայեցակարգային փաստաթղթեր, հաղորդակցության նյութեր:
Գնահատողը պետք է անցկացնի մասնակցային գնահատում, որը ենթադրում է բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավում, որը ներառում է, սակայն սահմանափակված չէ հետևյալ անձանց շրջանակով՝ ծրագրի աշխատակիցներ, մասնագետներ, փորձագետներ, այդ թվում՝ կոնսորցիումի անդամներ, գործընկեր պաշտոնատար անձինք, հանրային ծառայողներ, Ծրագրի շրջանակներում ստեղծված/ուժեղացված ՔՀԿ-ների կոալիցիայի անդամներ, ՔՀԿ-ների ինկուբատորների անդամ ՔՀԿ-ներ, ենթադրամաշնորհառուներ, դոնորներ: Գնահատողը պետք է հաշվի առնի այն հանգամանքները, որ ՔՀԿ-ները և ՔՀԿ-ների կոալիցիայի անդամները գործունեություն են ծավալում Երևանում, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի, Տավուշի, Արմավիրի, Կոտայքի մարզերի տարբեր քաղաքային և գյուղական համայնքներում: Ուշադրություն պետք է դարձնել նաև շահագրգիռ կողմերից տեղեկատվություն հավաքելու հետազոտության համապատասխան մեթոդներին, այդ թվում նաև՝ անհատական հարցազրույցներին, ֆոկուս խմբերին և միօրինակ հարցաշարերի մշակմանը և օգտագործմանը:

V. ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Այն ընկերությունը կամ անհատը կընտրվի որպես անկախ գնահատող, որը սահմանված ժամկետներում կներկայացնի ընտրությանը մասնակցելու ամբողջական հայտ: Ընտրության չափանիշները ներառում են՝

- Ներկայացված հայտի համապատասխանությունը՝ սույն տեխնիկական առաջադրանքին:
- Առաջարկվող մեթոդաբանության որակը:
- Հայտատուի որակավորումը, այդ թվում նմանատիպ ծրագրեր գնահատելու գործում նախկին փորձառությունը, ինչպես նաև հանրային քաղաքականությունների մշակման/բարելավման/ջատագովման և ՔՀԿ-Կառավարություն/ՏԻՄ երկխոսության հարցերում ունեցած փորձառությունը:
- Առաջարկվող մեթոդաբանության և աշխատանքային պլանի իրատեսական լինելը:

- Գնային առաջարկի արդյունավետությունը:
- Գնահատումը՝ սույն տեխնիկական նկարագրում նշված ժամկետներում ավարտելու կարողություն:

VI. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Գնահատողը՝ հայերեն և անգլերեն տարբերակներով պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

1. Գնահատման հաշվետվության նախագիծ (ներկայացմանը վերջնաժամկետը՝ 2019թ.-ի դեկտեմբերի 2-ին):
2. Վերջնական հաշվետվություն (ներկայացմանը վերջնաժամկետը՝ 2019թ.-ի դեկտեմբերի 10-ին): Վերջնական հաշվետվությունը պետք է կազմված լինի հետևյալ բաժիններից.

   ա) Գործադիր ամփոփում (առավելագույնը 2 էջ):

   բ) Գնահատման ամփոփում Power Point ձևաչափով:

   գ) Համատեքստի և ծրագրի համառոտ նկարագիր:

   դ) Գնահատման նպատակների և խնդիրների նկարագիր:

   ե) Գնահատման մեթոդաբանության և գնահատման ընթացքում տեղեկատվության հավաքագրման նպատակով օգտագործված մեթոդաբանության, այդ թվում՝ գործիքների նկարագիր:

   զ) Գնահատման արդյունքում բացահայտված հիմնական փաստերի, նվաճված արդյունքների, մարտահրավերների և եզրակացությունների ներկայացում:

   է) Քաղված դասերի քննարկում:

   ը) Առաջարկություններ (ծրագրային և այլ):

   թ) Հավելվածներ, այդ թվում դիտարկված ծրագրի փաստաթղթերի և օգտագործված գրականության ցանկ, անձանց և կազմակերպությունների ցանկ, ում հետ անցկացվել են հարցազրույցներ, հանդիպումներ, ֆոկուս խմբեր և այլն:

Գնահատման հաշվետվության նախագիծը ներկայացնելուց հետո, Գնահատողը պետք է ծրագիրն իրականացնողի հետ կազմակերպի դրա բանավոր ներկայացում և քննարկում: Ծրագիրն իրականացնողը պետք է ներկայացնի իր կարծիքը, որը պետք է հաշվի առնվի նախքան վերջնական հաշվետվության ներկայացնելը:

VII. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Իրավաբանների հայկական ասոցիացիան նախատեսում է Գնահատողին ընտրել մինչև 2019թ.-ի նոյեմբերի 11-ը: Ընտրված թեկնածուն պետք է ի վիճակի լինի գնահատումը սկսել 2019թ.-ի նոյեմբերի 12-ից:

Գնահատման հաշվետվության նախագիծը պետք է ներկայացվի մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 2-ը: Գնահատման հաշվետվության նախագծի բանավոր ներկայացումը և քննարկումը պետք

է անցկացվի 2019թ.-ի դեկտեմբերի 3-ին։ Վերջնական հաշվետվության ներկայացման վերջնաժամկետը՝ 2019թ.-ի դեկտեմբերի 10-ին։

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

Իրավաբանների հայկական ասոցիացիան սույն գնահատումը իրականացնելու նպատակով ընդունում է հայտեր անհատներից և կազմակերպություններից։ Հայտատուները պետք է ներկայացնեն հայերեն լեզվով հայտ, որը պետք է ներառի.

- Ինքնակենսագրություն (CV), որը մանրամասն ներկայացնում է Գնահատող(ներ)ի որակավորումը, սույն տեխնիկական առաջարկով նկարագրված չափանիշներին համապատասխանումը, ներառյալ նույն ոլորտում իրականացրած նմանատիպ աշխատանքների ցանկը։
- Հնարավորության կամ առկայության դեպքում Դիմումատուի կողմից վերջին երեք տարիների ընթացքում պատրաստված գնահատման հաշվետվության օրինակ (հայերեն և անգլերեն լեզուներով)։
- Առաջարկվող գնահատման մեթոդաբանության և գնահատման ընթացքում տեղեկատվության հավաքագրման և վերլուծության նպատակով օգտագործվելիք գործիքների նկարագիր։
- Աշխատանքային պլանի և բյուջեի նախագիծ։
- Կազմակերպության դեպքում նաև՝ պետական գրանցման վկայականի պատճեն, նախագահի մասին տեղեկություններ, Գնահատող(ներ)ի մասին տեղեկություն։

Անհրաժեշտության դեպքում Իրավաբանների հայկական ասոցիացիան կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր՝ ինչպես օրիգինալ, այնպես էլ՝ պատճեն։

Հանձնաժողովի կողմից կդիտարկվեն միայն ամբողջական հայտերը։

Հայտերը պետք է ուղարկել հետևյալ էլեկտրոնային փոստին՝ info@armla.am, նամակի թեմայի տողում նշելով՝ **«ԿԵՀ ծրագրի գնահատում»:**
Մրցույթի վերաբերյալ հարցեր և պարզաբանումներ ունենալու դեպքում դրանք կարող եք ներկայացնել հետևյալ էլեկտրոնային փոստին՝ info@armla.am:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է՝ **2019թ.-ի նոյեմբերի 7-ը,** Հայաստանի ժամանակով՝ **ժամը 17:00-ը**։

Ծանոթություն՝
Անհրաժեշտության դեպքում, Իրավաբանների հայկական ասոցիացիան կարող է փոխել սույն տեխնիկական առաջադրանքով սահմանված ժամկետները, որի մասին տեղեկությունը կհրապարակվի Ծրագրային կայքում՝ https://ccd.armla.am/։